«Երիտասարդ փաստաբանների ամառային ճամբար 2026». քննարկում

17.11.2026 16:29

Մեկնարկել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպված «Երիտասարդ փաստաբանների ճամբար 2026»-ը, որն իրականացվում է արդեն երկրորդ անգամ:
Միջոցառման մեկնարկին փաստաբանական համայնքի երիտասարդ ներկայացուցիչներին ողջունել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը և ՄԱԶԾ Հայաստան, Սահմանադրական բարեփոխումների ծրագրի համակարգող՝ Լառա Պետրոսյանը:
Այնուհետև տեղի է ունեցել պանելային քննարկում «Փաստաբանության ապագան նոր սերնդի տեսանկյունից. բաց երկխոսություն Պալատի հետ» թեմայով:

Քննարկմանը բանախոսությամբ հանդես են եկել՝

- ***Սիմոն Բաբայանը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ***
- ***Ռոման Ահարոնյանը՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի պրոռեկտոր, Պալատի խորհրդի անդամ***
- ***Վարազդատ Հարությունյանը՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, «Ֆիդելիս» փաստաբանական գրասենյակի հիմնադիր***
- ***Արմինե Ֆանյանը՝ փաստաբան, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ուսումնական դեպարտամենտի ղեկավար***
- ***Քննարկումը վարել է Սիլվի Տիգրանյանը՝ ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ:***

Այս միջոցառմանն աջակցել է Դանիայի, Լյուքսեմբուրգի և Կորեայի Հանրապետության կառավարությունների կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում, արդարադատության մատչելիության ապահովում, փախստականների և ընդունող համայնքների համար միասնական և աջակցող միջավայրի ձևավորում» ծրագիրը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })